



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ի ՊԱՏԻ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԹԵՄԻՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ ՎԵՐԱԾՈՒՅՄԱՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԵՊԶԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Արեւմտեան մեր Թեմին շնորհած հովուապետական այցելութեան ընթացքին, արձանագրուեցան ու կ'արձանագրուին զանազան բարձրակետեր, որոնք եթէ մէկ կողմէ կը հանդիսանան կիրարկումը Վեհափառ Հայրապետի գլխաւոր առաջադրանքներուն, այսինքն՝ հոգեւոր կեանքի վերանորոգման, մղում՝ Հայ Դպրոցի վերածաղկման ու Հայ Դատի պայքարի երթին, անոնք նաեւ առիթ կը հանդիսանան գնահատանքի արժանացնելու մեր ժողովուրդին նուիրեալներն ու բարերարները: Այս նպատակին համար առիթ կը ստեղծեն ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած ընդունելութիւններն ու ձեռնարկները:

Այս իմաստով, յիշատակելի բարձրակետ մը արձանագրուեցաւ Կիրակի, 16 Յոկտեմբերի երեկոյեան, Թեմիս կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին կազմակերպուած մեծարանքի ճաշկերոյթին՝ «Եունիվըրսըլ Յիլթըն» պանդոկին մէջ: Գազաթնակետային այդ ձեռնարկին տարրերն էին մասնակիցներու մեծաթիւ ներկայութիւնը, պաշտօնական հիւրերու եւ անձնաւորութեանց հոյը, անակնկալներ, յատկապէս կարգ մը ծառայատէր ու նուիրաբերող ազգայիններու շքանշաններով պարգեւատրումն ու յուշանուէրներու յանձնումը:

Ճաշկերոյթին ներկաներուն թիւը կը հասներ 1250ի, ինչ որ աննախընթաց իրողութիւն է մեր Թեմի պատմութեան մէջ: Ներկաներուն շարքին, պատկառելի թիւ կը կազմէին պետական ու համայնքային ներկայացուցիչները:

Մէկ ժամ տեւած ընդունելութենէ ետք, ժամը 6:30ին, Վեհափառ Հայրապետին թափօրը «Հրաշափառ»ով սրահ մուտք գործեց ներկաներու յոտնկայս ծափողջոյններով: Ժողովուրդին համար անակնկալ էր, որ Լիբանանի Մարոնի եկեղեցւոյ Պշարա Ռայի Պատրիարքը կ'ընկերանար Վեհափառ Հայրապետին, ընկրակցութեամբ համայնքի եպիսկոպոսներու. Վեհափառին կողքին էին Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Վիարակոսա, Առաջնորդ Սրբազանը եւ միաբան ու արժանապատիւ հոգեւոր հայրեր: Պատուոյ սեղանին վրայ տեղ գրուած էին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ Տիկինը, Լիբանանի գլխաւոր հիւպատոսուհի Տիկին Մատնա Աուն Ղազալ եւ ամուսինը, Գերշ.

Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Յայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, Յայ Կաթողիկէ համայնքապետի ներկայացուցիչ Յոգշ. Տ. Արմենակ Վրդ. Պետրոսեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան եւ Յ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան:

## ՍԱՐՈՆԻՆԵՐՈՒ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԸԸ

Ներկաները ջերմ ծափողջոյններով ողջունեցին Վեհափառ Յայրապետը, Ռայի Պատրիարքն ու թափօր: Առաջնորդ Սրբազանը յայտատարեց, թէ Մարոնի համայնքի հոգեւոր պետը ընդառաջած է Վեհափառ Յայրապետի հրաւերին ու այսօր մեզի հետ է, ու հրաւիրեց հիւր պատրիարքը ողջոյնի խօսք արտասանելու:

Լայի Պատրիարքը գոհունակութիւն արտայայտեց այս երեկոյթին մասնակից ըլլալուն համար, հաստատեց, թէ ընդառաջած է Վեհափառ Յայրապետին ու Առաջնորդ Սրբազանի հրաւերին. ան ողջունեց քաղաքապետ Վիարակոսան ու պատուոյ հիւրերը, ապա անդրադարձաւ պատրիարքութեան կեդրոնատեղիին՝ Պրքերքէի ու Անթիլիասի միջեւ գործակցական կապերուն: Ան դրուատիքով խօսեցաւ Լիբանանէն հեռու ապրող լիբանանցիներուն՝ հայրենիքին կապուածութեան, նշելով, որ անոնց շարքին են նաեւ հայերը: Պատրիարքը վեր առաւ հայ ժողովուրդի արժանիքները, նկատել տալով, որ «ձեր նահատակներուն ու պապերուն թափած արիւնը ձեզ կը դարձնէ մեծ ժողովուրդ, որ նահատակութենէ ետք վերականգնած է»: Ռայի Պատրիարքը խօսեցաւ նաեւ միջ-եկեղեցական գործակցական յարաբերութեանց մասին, որոնք կիրարկում կը գտնեն Լիբանանի մէջ թէ այստեղ, ու վերջապէս, ողջունեց Լիբանանի ու Միջին Արեւելքի ի նպաստ տրամադրուած նեցուկն ու աջակցութիւնը: Մարոնի հոգեւոր առաջորդը անհրաժեշտ նկատեց, որ Միջին Արեւելքի քաղաքակրթութեան մէջ քրիստոնէական ներկայութիւնը պետք է պահպանուի ու միասնականութեամբ Աստուածաշունչի լոյսն ու եկեղեցւոյ գործը տարածում գտնեն:

Վեհափառ Յայրապետը ֆրանսերէնով պատասխանեց Ռայի Պատրիարքի ողջոյնին: Ան հայութեան ու մեր եկեղեցւոյ հանդէպ յարգանքի արտայայտութիւն նկատեց Պատրիարքին ներկայութիւնը, հաստատելով, որ երկու եկեղեցիներուն միջեւ գործակցութիւնը չէ սահմանափակուած Լիբանանով, այլ նաեւ արտայայտութիւն կը գտնէ այստեղ ու աշխարհի այլ շրջաններու մէջ: Նորին Ս. Օծութիւնը նկատել տուաւ, որ երկու եկեղեցիները բաժնեկից են Միջին Արեւելքի մէջ քրիստոնէութեան առաքելութեան շարունակման, նաեւ շատագով՝ իսլամ-քրիստոնէայ երկխօսութեան: Ան վերահաստատեց հայութեան նախանձախնդրութիւնը՝ Լիբանանի ազատութեան ու անկախութեան պահպանման, եւ մաղթեց որ Պատրիարքին ու իր այժմու գոյգ առաքելութիւնները յաջողութեամբ պսակուին:

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Խօսքերու փոխանակումէն ետք, օրուան պաշտօնական յայտագիրը գործադրութեան դրուեցաւ քայլերգներու երգեցողութեամբ: Տիկին Վարդուհի Աւետիքեան կատարեց Լիբանանի Զայլերգը, դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Յուրի Ապտուլեանի, իսկ Անտրիկեան ու Յայկական Զայլերգները կատարեց Լարա Ղարիպեան:

Վեհափառը կատարեց սեղաններու օրհնութիւնը: Բացման խօսք արտասանեց օրուան հանդիսավարը՝ Մարք. Սրկ. Շիրին, որ նաեւ Յայրապետին ի պատիւ այս ճաշկերոյթին հիւրընկալն էր իր Տիկնոջ՝ Մարկրեթի հետ միասին: Ան ողջունեց պաշտօնական եւ ներկայացուցչական դէմքերը, որոնց շարքին էին դաշնակցային ու նահանգային խորհրդարանի անդամներ՝ Էտըմ Շիֆ, Էնթընի Փորթանթիսօ, Զեւին Տը Լիօն, Լոս Անճելըսի նահանգային վերակացու Մայք Անթոնովիչ, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի եւ անդամ Փօլ Գրիգորեան, Կլենտլի քաղաքապետական խորհուրդի անդամ Արա Նաճարեան, Փասատինայի քաղաքապետ Պիլ Պոկարթ եւ խորհուրդի անդամներ, դատաւոր Արմանտ Արապեան եւ ներկայացուցչական այլ դէմքեր, ապա վեր առաւ մեր եկեղեցւոյ դարաւոր ժառանգութեան կերտումին մէջ Սրբազան Յայրերու աւանդը, աւելցնելով, որ նորագոյն դարաշրջանին, Նորին Ս. Օծութիւնը շարունակողն է այն իրագործումներուն, որոնք արձանագրուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Լիբանան հաստատումէն ետք, իրերայաջորդ կաթողիկոսներուն կողմէ, անդրադարձաւ հովուապետական այցելութեան առաջին տասը օրերու ընդհանուր պատկերին, ու հրաւիրեց Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեանը՝ արտասանելու ողջոյնի իր խօսքը:

Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը, որ նաեւ Վեհափառի հիւրընկալման Գործադիր Մարմինին ատենապետն է, ներկաներուն ուշադրութեան յանձնեց Վեհափառ Յայրապետին վաստակին գլխաւոր գիծերը՝ իբրեւ եկեղեցւոյ առաջնորդ, գիրքերու հեղինակ, միջ-եկեղեցական յարաբերութեանց ու Միջին Արեւելքի մէջ կրօնքներու միջեւ երկխօսութեան դերակատար, քաջամողջութիւն ու աննահանջ երթ մաղթեց Վեհափառ Յայրապետին եւ առաջարկեց, որ ներկաները յոտնկայս բաժակ բարձրացնեն Վեհափառին համար:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Ռիմա Պօղոսեան: Ան մեր Թեմին համար բարեբախտութիւն նկատեց Վեհափառին շնորհաբեր այցելութիւնը՝ հովուապետին ու հօտին միջեւ ուղղակի հաղորդակցութիւնը, եւ հաւաստեց, որ մեր ժողովուրդը պիտի ընդառաջէ Վեհափառ Յայրապետի թեկադրանքներուն, ի խնդիր մեր դիմագրաւած հարցերու բարօք լուծման:

ՎԻԱՐԱԿՈՍԱ.- ԶԱՅԵՐՈՒ ՇԻՆԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Սրտի խօսք արտասանելու հրաւիրուեցաւ քաղաքապետ Վիարակոսա, որ Վեհափառ Հայրապետը, Առաջնորդ Սրբազանը, Լիբանանի ու Հայաստանի հիւպատոսները ողջունելէ ետք, անդրադարձաւ Վեհափառ Հայրապետի դերակատարութեան՝ միջազգային գետնի վրայ, յիշեցնելով, որ ան երկու շրջան եղած է Եկեղեցիներու Համշխարհային Խորհուրդի առաջնորդը: Ան նշեց, որ Միացեալ Նահանգներ հաւատքի ազատութեան երկիր է ու ողջունեց Վեհափառը՝ իբրեւ հաւատքի առաջնորդ:

Խօսելով հայութեան անցեալի դառն փորձառութեանց ու այժմու ներդրումներուն մասին, Լոս Անճելըսի քաղաքապետը հաստատեց, թէ Ցեղասպանութեան մութ օրերէն ետք, հայութիւնը վերահաստատուեցաւ Լիբանան, Միացեալ Նահանգներ, Եւրոպա ու այլուր, հաւատքի ճամբով ապրեցաւ վերականգնում եւ այսօր, կարելոր ազդեցութիւն ու ներդրում ունի այս քաղաքին մէջ: Ան մաղթեց, որ Միջին Արեւելքի մէջ բարեշրջական ալիքները առիթ ըլլան փոխադարձ հանդուրժողութեան ու հաւատքի ազատութեան:

Քաղաքապետի խօսքէն ետք, Վեհափառ Հայրապետին յանձնուեցաւ Մայք Անթոնովիչի ողջոյնի հռչակագիրը, իսկ դաշնակցային խորհրդարանի անդամ Էտըմ Շիֆ, խորհրդարանի հանրապետական եւ դեմոկրատ անդամներուն անունով, բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ընդգծելով, որ պատուաբեր է անոր կողմէ հանդուրժողութեան ու իմաստութեան քաջալերումը:

#### ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Պաշտօնական յայտագիրին ընթացքին, Վեհափառ Հայրապետը կատարեց շքանշաններու տուչութիւնը եւ յուշանուէրներու յանձնումը:

Տիար Խաժակ Տիքիճեանի յիշեալ խօսքէն անմիջապէս ետք, ապա նաեւ յայտագիրին ընթացքին, Առաջնորդ Սրբազանը գոհունակութեամբ ներկաներուն յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը, գնահատելով մեր Թեմին ու ժողովուրդին նուիրեալներն ու բարերարները, եւ ընդառաջելով իր ու Ազգային Վարչութեան դիմումին, որոշած է շքանշաններով պատուել ազգայիններ ու բարերարներ: Ան յիշեցուց, որ նախընթաց հանդիսութեանց առիթով, Վեհափառ Հայրապետը շքանշաններ շնորհած էր Տիար Սարգիս Սեփեթճեանի, Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան բարերար ամուլին, Երգիչ Յարութ Փամպուքճեանի, խմբագիր Նազարէթ Պերպերեանի, բարերար Յարութ Օհանեանի եւ հանգուցեալ Կիրակոս Թիթիգեանի (յետ մահու), իսկ այսօր, նման պատիւի պիտի արժանանան շարք մը նուիրեալ ազգայիններ, որոնք իրենց վաստակէն ու քրտինքէն անսակարկ կերպով նուիրաբերած են Ազգ. Առաջնորդարանին, Կաթողիկոսութեան, մեր ժողովուրդին ու կազմակերպութեանց, միութեանց: Առաջնորդ Սրբազանը Հայրապետին ու ներկաներուն ներկայացուց այդ նուիրեալներն ու շքանշաններու յայտարարութիւնը: Շքանշաններու արժանացան Տեարք Խաժակ Տիքիճեան («Կիլիկեան Իշխան»), Օր. Ռոզէթ Յարութիւնեան («Կիլիկեան Ասպետ»), Տեարք Վահան Պզտիկեան («Կիլիկեան Ասպետ»), Փրոֆ. Յարութ Պարսամեան («Կիլիկեան Իշխան»), Մարք. Սրկ. Շիրին

(«Կիլիկեան Իշխան»), Տիկին Սիլվա Չագմագճեան («Կիլիկեան Ասպետ») եւ Տիար Յերի Նաճարեան («Կիլիկեան Իշխան»): (*Շքանշաններու տուչութեան մանրամասնութիւնները տեսնել առանձին*):

Վեհափառ Հայրապետը նաեւ յատուկ յուշանուէրներ յանձնեց Տիար Յարութիւն Չափարեանի, որ վերջին տարիներուն, ոչ միայն սրտաբուխ նուիրատուութիւններ կատարած է Ազգ. Առաջնորդարանի, այլ նաեւ նուիրաբերած է տարբեր առիթներով իր պատրաստած յուշանուէրները: Նմանօրինակ յուշանուէրի մը արժանացաւ ազգային կեանքի երախտաւորներէն Տիար Չարլի Կալեան, որ մեր Թեմին ու շրջանիս հայկական գաղութին ունի տասնամեակներուանձնդիր ծառայութիւն:

## ՎԵՅԱՓԱՌԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Պահը հասած էր ունկնդրելու Վեհափառ Հայրապետին պատգամը:

Առաջնորդ Սրբազանը, Նորին Ս. Օծութիւնը հրաւիրելէ առաջ, հակիրճ կերպով անդրադարձաւ հովուապետական այս այցելութեան գլխաւոր նպատակներու, ու յատկապէս Հայ Դպրոցին մղում տալու առաջադրանքին, ու յայտարարեց, թէ Վեհափառ Հայրապետը ընդառաջած է նուիրատուութեանց մեծ մասը ազգային վարժարաններուն տրամադրելու Թեմիս ժողովականութեան խնդրանքին: Ան այս որոշումը նկատեց հայ դպրոցին, հայերէնին ու ազգային մշակոյթին նկատմամբ Վեհափառ Հայրապետի հոգածու եւ նախանձախնդիր վերաբերմունքին գործնական արտայայտութիւնը: Ապա, իբրեւ երախտագիտութեան խորհրդանիշ, Առաջնորդ Սրբազանը յանուն մեր Թեմին յուշանուէր մը յանձնեց Վեհափառ Հայրապետին: Յուշանուէրը ադամանդակուռ մատանի մըն էր, արուեստի գեղեցիկ գործ մը, նուէր՝ «Թագորի» հաստատութեան սեփականատէր Հայկ Թագորեանի կողմէ: Մատանին կը կրէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զինանշանն ու երկգլխանի արծիւը:

Վեհափառ Հայրապետը գոհունակութիւն արտայայտեց այս համախմբումին համար, նկատել տալով, որ անիկա պարզապէս ճաշի սեղանի շուրջ հանդիպում չէ, այլ ապագայապաշտ տեսլականի մը արտայայտութիւնը: Վստահ եմ որ, շարունակեց ան, դուք այս միջավայրէն ձեզի հետ պիտի տանիք այս մթնոլորտը եւ զայն պիտի տարածէք մեր ընտանիքներուն ու համայնքին մէջ:

Նորին Ս. Օծութիւնը դրուատիքով խօսեցաւ Առաջնորդ Սրբազանին նուիրեալ ծառայութեան ու յանձնառութեան մասին, դիտել տալով, որ այս է հայ հոգեւորականին կոչումը եւ առաքելութիւնը. մեր եկեղեցին կը պատրաստէ ժողովուրդին հետ կապ ունեցող ու անոր հետ, ի խնդիր անոր գործող հոգեւորականներ: Ան գնահատանքի խօսք ուղղեց Թեմիս ժողովականութեան, որ սերտօրէն կը գործակցի Առաջնորդ Սրբազանին հետ: Առ ի գնահատանք Առաջնորդ Սրբազանին երկարամեայ ծառայութիւններուն, Վեհափառ Հայրապետը գեղեցիկ պանակէ մը նուիրեց Առաջնորդ Սրբազանին:

Շարունակելով իր պատգամը, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ հաւաքականութիւն մը պէտք է պահպանուի տեսլականով ու շօշափելի առաջադրանքներով, առանց որոնց, գաղութ մը կը պարպուի իր իմաստէն

ու արժեքն: Որակը, հոգեկան աշխարհը, մշակոյթն ու արժեքները կը կազմեն հաւաքականութեան մը սիրտն ու եութիւնը. դարեր շարունակ, մեր եկեղեցին ու դպրոցները եղած են նման արժեքներու պահպանման ու փոխանցման կեդրոններ, յենելով հոգեկան ուժի վրայ: Եկեղեցին ու դպրոցը պէտք է մնան մեր հաւաքական կեանքին ու հոգածութեան կեդրոնական տարրերը, անոնց շուրջ է որ պէտք է կառուցուին բոլոր առաջադրանքներն ու ծրագիրները: Տեսլականը, ըսաւ Վեհափառը, կը կազմէ գաղութի մը ներքին ուժը, որպէսզի անիկա շրջանցէ ինքզինք ու հասնի անդին, հիմնուելով հաւատքի, յոյսի եւ վճռակամութեան վրայ: Ան հաստատեց, որ բոլորիս համար Յայաստանի հզօրացումը, Ղարաբաղի զօրակցութիւնն ու Յայ Դատին հետապնդումը կը հանդիսանան անմիջական հրամայականներ, որովհետեւ չենք կրնար մոռնալ մեր տուած մէկ ու կէս միլիոն զոհերը, հայրենի հողերուն կորուստը: Միայն յիշելով, կամ՝ Ցեղապանութեան ճանաչումով չենք կրնար բաւականանալ, այլ կը պահանջեքք, որ արդարութիւն հաստատուի, մեր բռնադատուած իրաւութիւնները վերահաստատուին: Հաւատարիմ պիտի մանանք մեր նահատակներուն կտակին ու աւանդին, շեշտեց Վեհափառը:

Խօսելով մեր գաղութին մէջ վերջին շուրջ տասը օրերու իր փորձառութեան մասին, Վեհափառ Յայրապետը գնահատանք արձանագրեց կազմակերպումի, վերանորոգումի ու հայեցի մթնոլորտի ամրացման իրականութիւններուն մասին, որոնց ականատես վկան է եղած: Ան վեր առաւ եկեղեցւոյ վերանորոգման անհրաժեշտութիւնն ու վերանորոգողի դերակատարութիւնը, ընդգծելով, որ Անթիլիասի կողմէ պատրաստուող հոգեւորականները այս մօտեցումով կը լծուին մեր ժողովուրդի ծառայութեան, հետեւելով Հաւատքի Առաքելութիւն ըլլալու Ս. Աթոռի տեսլականին: Ան այս առիթով անգամ մը եւս շեշտը դրաւ ժողովուրդին եկեղեցին ըլլալու Յայց. Առաքելական եկեղեցւոյ արժանիքին ու յատկանիշին վրայ:

«Մեր արդար դատը՝ եկեղեցւոյ դատն է, մարդկային իրաւունքներու եւ արդարութեան հասնելու դատ է», շարունակեց Վեհափառ Յայրապետը, շեշտելով, որ հայութիւնը արդարութիւն եւ հատուցում պիտի շարունակէ ցեղասպան թուրքէն, մինչեւ արդարութեան ամբողջական իրականացումը: Ան յիշեցուց, որ հայութիւնը իր իրաւութիւններուն համար միաձայն է Յայաստանի, Ղարաբաղի թէ աշխարհասփիւռ գաղութներուն մէջ, հաւատարիմ պիտի մնայ նահատակներու կտակին, որ արդարութեան ձայնն է, իսկ «արդարութիւնը Աստուծոյ պարգէնն է մարդուն»: Վեհափառ Յայրապետը իր խօսքը եզրափակեց Պ. Սեւակի «Սարդարապատ»էն մէջբերումով մը, հաստատելու համար, որ հայ ժողովուրդը չէ ինկած, այլ տակաւին «ոգու պարտք» ունի հայրենիքին ու պատմութեան, միասնութեամբ՝ որ մեր հզօրութեան աղբիւրն է: Նորին Ս. Օծութիւնը «Պահպանիչ»ով փակեց երեկոն:

Նշենք, որ յայտագիրին ընթացքին, տեղի ունեցան երաժշտական մատուցումներ. ջութակի վրայ Նուագեց Յովիկ Մեղրիկեան, իսկ Սայաթ Նովայի երգեր կատարեց Յովհաննէս Բաբախանեան: Ճաշի պահուն թէ անոր հետեւած միջոցին, պաստառի վրայ ցուցադրուեցան մեր

վարժարաններուն կեանքը, ապա նաեւ Կաթողիկոսութեան ու Դպրեվանքին առաքելութիւնը արտացոլացնող ժապաւեններ:

Յայտագիրը իր լրումին հասաւ «Կիլիկա» եւ «Ի վեհ բարձանց» երգերով: Ներկաները պահ մը եւս համեցան սրահին մէջ, շնորհաւորեցին պարգեւատրեալ նուիրեալները եւ տուն վերադարձան՝ իրենց հետ տանելով սեղանի զարդ յուշանուէրներ եւ անմոռանալի յիշատակներ:

\*\*\*

## **ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԳՆԱՅԱՏՈՒՄ՝ ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԹԵՄԻՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ**

Արեւմտեան մեր Թեմին կողմէ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կազմակերպուած մեծարանքի ճաշկերոյթին ընթացքին, Կիրակի, 16 Հոկտեմբերի երեկոյեան, Վեհափառ Հայրապետը Կիլիկեան Իշխանի ու Ասպետի շքանշաններով պատուեց Կաթողիկոսարանին, Ազգ. Առաջնորդարանին, ազգային հաստատութեանց ու միութեանց նիւթապէս ու քրտինքով ծառայած ու նուիրաբերած ազգայիններ:

Վեհափառ Հայրապետին ձեռամբ շքանշան ստացան՝

- Տիար Հերի Նաճարեան, որ մեր միութեանց ու կազմակերպութեանց անցեալի իր նուիրատուութեանց կողքին, հանդիսացաւ հովուապետական սոյն այցելութեան գլխաւոր հովանաւորը, Ազգ. Առաջնորդարանին նուիրելով 250,000 տոլար: Անոր նուիրաբերումները բաշխուած են նաեւ Հայ Աւետ. Եկեղեցւոյ ու Հայ Դատին: Արժանացաւ «Կիլիկեան Իշխան»ի շքանշանին:
- Տիար Խաժակ Տիքիճեան արժանացաւ «Կիլիկեան Իշխան»ի շքանշանին, առ ի գնահատանք թեմական թէ ազգային-կուսակցական ոլորտներու մէջ իր տասնամեակներու ծառայութեան ու ներդրումին: Ան ծառայած է իբրեւ Ազգ. Վարչութեան անդամ ու ատենապետ, նուիրեալ ծառայութիւն մատուցած է կրթական համակարգին, իսկ ներկայիս անդամ է Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան:
- Փրոֆ. Յարութ Պարսամեան արժանացաւ «Կիլիկեան Իշխան»ի շքանշանին. Ազգ. Առաջնորդարանիս եւ Օրէնճ Զաունթիի Հայ Կեդրոնի բարերարներէն է, որ նաեւ հովուապետական այցելութեան առիթով իշխանական նուիրատուութիւն մը կատարած է Առաջնորդարանիս, փոխանցելով «Էփըլ» ընկերութեան 500 բաժնետոմս: Փրոֆ. Յ. Պարսամեանի բարերարութիւնը վայելած է Օրէնճ Զաունթիի Հայ Կեդրոնը, որուն ճակատին արձանագրուած է իր անունը. ան նաեւ կրթանպաստի հիմնադրամ մը հաստատած է Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ, ու իր հեղինակած գիրքին՝ «Resurrection with Shoe and Cane»ի հասոյթը կը նուիրաբերէ այդ հիմնադրամին:

- Տիար Վահան Պատրիկեան արժանացաւ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանին: Ազգ. Վարչութեան անդամ, Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի աշխատանքներուն գլխաւոր պատասխանատու-վերահսկող եւ Ազգ. Առաջնորդարանին թէ հայկական հաստատութեանց բազմաթիւ բարերարութիւններու աղբիր՝ Տիար Վահան Պատրիկեան նուիրեալ ծառայութիւն մատուցած է մեր Թեմի եկեղեցիներուն, ատենապետն է Ազգ. Առաջնորդարանի Շէնքի Յանձնախումբին:
- Մարք Սրկ. Շիրին արժանացաւ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանին: Եղած է Դպրեվանքի սաներէն, անդամ՝ մեր Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովին, ծառայութիւններ մատուցած՝ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ, իբրեւ հոգաբարձու, մասնակցած է Ազգ. Ընդհանուր Ժողովի՝ իբրեւ մեր Թեմի պատգամաւոր. ամենայն պատրաստակամութեամբ յանձն առած է Վեհափառ Հայրապետի մեծարանքի երեկոյին հիւրընկալումը՝ իր Տիկնոջ՝ Մարկարէթի հետ միասին:
- «Լուռ բարերարուի» Տիկին Սիլվա Չագմագճեան արժանացաւ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանին: Տարիներ շարունակ առանց բացայայտելու կատարած է բազմաթիւ սրտաբուխ նուիրատուութիւններ, նպաստելով Ազգ. Առաջնորդարանին, հայկական միութեանց ու մանաւանդ մայր հայրենիքին, իր «Գառնի» հաստատութեան ճամբով. հովուապետական այս այցելութեան առիթով, 100,000 տոլարի սրտաբուխ նուիրատութիւն մը կատարած է Առաջնորդ Սրբազանին նուագագոյն ակնարկութեան մը ի պատասխան:
- Օր. Ռոզէթ Յարութիւնեան արժանացաւ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանին: Ազգ. Առաջնորդարանի բարերարներէն՝ իր կեանքի վաստակին արդիւնքը եղող բնակարանային շէնք մը նուիրաբերած է Ազգ. Առաջնորդարանին, զայն կենդանութեան իսկ փոխանցելով Ազգի Տան:

Յիշեցնենք, որ հովուապետական այս այցելութեան առիթով կազմակերպուած զանազան հանդիսութիւններու եւ ձեռնարկներու ընթացքին, Վեհափառ Հայրապետը շքանշաններ շնորհեց նաեւ Տեարք Սարգիս Սեփեթճեանի, Օսկո Կիրակոսեանի, Յարութ Փամպուրճեանի, Նազարէթ Պերպերեանի, Յարութիւն Օհանեսեանի եւ Կիրակոս Թիթիզեանի (յետ մահու):

## **PONTIFICAL BANQUET IN HONOR OF HIS HOLINESS CATHOLICOS ARAM I A HISTORIC EVENING**

On the evening of Sunday, October 16, 2011, a record number 1250 sponsors and friends, along with a number of public officials and dignitaries, gathered at the Universal Hilton for the Pontifical Banquet in honor of His Holiness Catholicos Aram I.



With the singing of the “Hrashapar” hymn, His Holiness entered the hall as guests were pleasantly surprised that the Pontiff was joined by His Beatitude Bechara Rai, Patriarch of the Maronite Church, and Bishops. The procession included H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy, and Mayor Antonio Villaraigosa. The head table included Consul General of Armenia Grigor Hovhannissian and his wife, acting Consul General of Lebanon Madonna Aoun Ghazal and her husband, H.E. Archbishop Yeprem Tabakian, H.E. Archbishop Vatche Hovsepian, Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of N. America, Very Rev. Fr. Armenag Bedrossian, representing Very Rev. Fr. Krikor Chahinian, Rector of the Armenian Catholic Church, Central Executive member Mr. Khajag Dikijian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian.

At the start of the evening, the Prelate announced with joy that His Beatitude Patriarch Bechara Rai had reciprocated the visit of His Holiness a day earlier, and invited him to deliver his remarks.

Speaking in Arabic, Patriarch Rai expressed thanks for the opportunity to participate in the Pontifical Banquet, and after greeting the Mayor and official guests, went on to speak about the close relation between Antelias and the Maronite Patriarchate at Bkerke. He spoke with pride at the strong bond Lebanese citizens in the Diaspora feel with their homeland, Lebanon, noting that Armenians are among that group. Speaking of the virtues of the Armenian people, His Beatitude stated that after martyrdom the Armenian people rose again, and that makes them great people. Patriarch Rai commended all those who stand behind and lend their support to the progress of Lebanon and the Middle East, and in conclusion emphasized how crucial the presence of Christians in the Middle East is and how important it is to spread the light of the Bible and the work of the Church in the region.

Responding in French, His Holiness welcomed His Beatitude, considered his presence an expression of respect towards the Armenian people and the Armenian Church, and stated that collaboration between the Armenian and Lebanese people is not limited to Lebanon, rather it can be found across the globe. His Holiness noted that the Armenian and Maronite Churches both share in the responsibility of maintaining Christianity in the Middle East as well as encouraging Muslim-Christian dialogue. In conclusion, His Holiness reaffirmed the dedication of the Armenian people to ensuring the freedom and independence of Lebanon, and wished that the shared mission of His Beatitude and himself are successfully realized.

The official program began with the singing of national anthems. Mrs. Vartoug Avedikian sang the Lebanese national anthem, accompanied by Mrs. Hourig Abdulian on the piano, and Ms. Lara Gharibian performed the American and Armenian anthems.

Following the blessing of tables by His Holiness, Deacon Mark Shirin, who was the Pontifical Banquet sponsor and Master of Ceremonies, welcomed the guests and acknowledged the public officials present, including Congressman Adam Schiff, State Senator Kevin De Leon, Assembly member Anthony Portantino, Los Angeles County Supervisor Mike Antonovich, Los

Angeles City Council President Eric Garcetti and member Paul Krekorian, Glendale City Council member Ara Najarian, Pasadena Mayor Bill Bogart and City Council members, and Judge Armand Arabian.

Central Executive member Mr. Khajag Dikijian was then invited to deliver his remarks. Mr. Dikijian, who is also the Chair of the Pontifical Visit Steering Committee, brought to the attention of the guests the extraordinary profile of His Holiness as a church leader, author, and intermediary in inter-church and inter-faith relations, and welcomed the guests to rise and raise a glass in honor of His Holiness.

Executive Council Chair Mrs. Rima Boghossian remarked that the Prelacy is honored to be graced with the Pontifical Visit of His Holiness and for shepherd and flock to be in direct communication, and affirmed that our community will heed the guidance and suggestions of His Holiness to overcome any concerns we may face.

Mayor Villaraigosa was then invited to share his thoughts. The Mayor lauded the role of His Holiness on the international level, noting how the Pontiff headed the World Council of Churches as Chairmen for two terms. On behalf of the United States of America, a nation of religious freedom, he welcomed His Holiness as a faith leader. Speaking of the Armenian people, the Mayor noted that after the dark days of the Genocide, the Armenian people spread to all parts of the world and with their faith they reestablished themselves and today, the Armenians of Los Angeles contribute greatly to the community and to society.

Following the Mayor's remarks, His Holiness was presented with a certificate of welcome by Supervisor Mike Antonovich, and Congressman Adam Schiff welcomed the Pontiff on behalf of his colleagues in Congress.

The Prelate then announced that in response to the request by the Executive Council, His Holiness would be commending Pontifical Visit sponsors and Prelacy donors throughout the evening. The Prelate reminded the guests that His Holiness had, during previous events, awarded medals to Mr. and Mrs. Sarkis Sepetjian, Mr. and Mrs. Osko Karaghossian, singer Harout Pamboukjian, editor Mr. Nazaret Berberian, sponsor Mr. Harout Ohanessian, and Mr. Guiragos Titizian (posthumously).

During the Pontifical Banquet, Mr. Harry Nadjarian, Mr. Khajag Dikijian, and Professor Harut Barsamian were awarded the "Prince of Cilicia" medal, while Mr. Vahan Bezdikian, Deacon Mark Shirin, Mrs. Silva Tchakmakjian, and Ms. Rosette Haratoonian were awarded the "Knight of Cilicia" medal. His Holiness presented mementos to Mr. Harout Jabarian and Mr. Charlie Ghailian in commendation for their dedication and support. **(Please see separate press release for details on the awarding of medals).**

Prior to inviting His Holiness to deliver his message, the Prelate reflected on one of the main themes of the Pontifical Visit, which is the continued progress of our schools. His Eminence announced that His Holiness had responded favorably to a request by Prelacy Councils member to allocate a large part of donations to schools, a decision he regarded as a strong testament to the devotion of His Holiness to the Armenian School, language,

and heritage. The Prelate then presented His Holiness with a gift on behalf of the Prelacy as a token of gratitude. The gift was an exquisite diamond studded ring which bore the emblem of the Catholicosate of Cilicia and the two-headed eagle. It was a beautiful work of art and a donation by the owner of ՔԹԹԹ, Mr. Haig Tacorian.

His Holiness greeted the guests and expressed appreciation for the dinner, which he said is not just a dinner but a demonstration of a commitment to safeguarding our future. His Holiness spoke with acclaim of the service and devotion of the Prelate, and commended the Prelacy Councils members for their input and contributions.

In commendation for the Prelate's decades-long service, His Holiness presented him with a Panagia (Banageh).

Continuing his message, His Holiness stated that a people are sustained by its ideals, and without ideals a community loses its meaning and purpose. The spiritual, the cultural, a value system is what forms the heart and soul of a people, and for centuries it has been our churches and our schools that have defended and promoted our values and they must remain the central elements of our collective lives. His Holiness affirmed that for the Armenian people as a whole, empowerment of Armenia, support of Karabakh, and furthering of the Armenian Cause are imperatives, as we will never forget our one and a half million martyrs and our lost lands. The Pontiff stated that we must not be content with just commemoration and recognition; that we must demand justice be served, our rights fulfilled. We will remain faithful to the legacy of our martyrs. Reflecting on the first ten days of the Pontifical Visit, His Holiness commendably noted that he had witnessed renewal and a strengthened sense of national identity. He highlighted the importance of renewal in the Church and by the Church, stressing that clergy members delve into their service with this approach in mind and with the ideal of the Holy See as a Faith Mission. On the topic of the Armenian Cause, His Holiness stated that our just cause is the cause of our Church, it is the cause of attaining our human rights and justice, and stressed that our people will continue to demand from Turkey what is rightfully ours until we reach our ultimate goals. In conclusion, His Holiness affirmed that Armenians around the world, whether in Armenia, Artsakh, or the Diaspora, are united in this common cause, that we as a people are not resigned but rather have a great deal more to contribute to our homeland and our history.

Throughout the evening, guests were entertained with musical interludes by Hovig Meghriyan on the violin, and singer Hovhannes Papakhanian who performed songs by Sayat Nova. Guests also enjoyed a slide show presentation on our Prelacy Schools, and on the mission of the Catholicosate and the Seminary.

The evening came to a close with the benediction by His Holiness, and the Cilician and Pontifical anthems.

## **HIS HOLINESS AWARDS MEDALS TO**

## PONTIFICAL VISIT SPONSORS AND PRELACY DONORS

During the Pontifical Banquet on October 16, 2011, His Holiness Catholicos Aram I awarded "Prince of Cilicia" and "Knight of Cilicia" medals to Prelacy sponsors and supporters for their contributions to the Catholicosate, Prelacy, and community.

His Holiness awarded the following individuals:

Mr. Harry Nadjarian, "Prince of Cilicia": In addition to his benevolence to community organizations, Mr. Nadjarian most recently donated \$250,000 as the main sponsor of the Pontifical Visit. He has lent his support to the Armenian Evangelical Union and the Armenian National Committee.

Mr. Khajag Dikjian, "Prince of Cilicia" Has devotedly served for the community for decades. Mr. Dikjian has been a member and Chair of the Prelacy Executive Council, has brought his service to Prelacy Schools, and is currently a member of the Catholicosate Central Executive.

Professor Harut Barsamian, "Prince of Cilicia": Prof. Barsamian is a sponsor of the Prelacy and the Orange County Armenian Center, the latter of which bears his name. Most recently, he generously donated 500 shares of Apple stock to the Prelacy in honor of the Pontifical Visit. He has also established a scholarship fund at the Prelacy, and proceeds from his book "Resurrection with Shoe and Cane" are allocated to the scholarship.

Mr. Vahan Bezdikian, "Knight of Cilicia": Mr. Bezdikian is a member of the Prelacy Executive Council, supervised and oversaw the building of the Prelacy headquarters and continues to serve in that regard as the Chair of the Building Committee, and has been a long-time sponsor of the Prelacy and community organizations.

Deacon Mark Shirin, "Knight of Cilicia": Mr. Shirin is a Seminary alumnus, a delegate at the Representatives Assembly, devoted servant of Holy Trinity Church of Fresno, and has represented the Prelacy at the Catholicosate General Assembly. Mr. Shirin and his wife Margaret were the main sponsors of the Pontifical Banquet.

Mrs. Silva Tchakmakjian, "Knight of Cilicia": A "silent sponsor", Mrs. Tchakmakjian has been quietly lending her generous support to the Prelacy, Armenian organizations, and especially Armenia, through her "Garni" foundation. Most recently, she donated \$100,000 on the occasion of the Pontifical Visit.

Ms. Rosette Haratounian, "Knight of Cilicia": Ms. Haratounian is a Prelacy sponsor who generously donated to the Prelacy an apartment building she came to own through her hard work.

During various Pontifical Visit events, His Holiness commended other community sponsors as well, awarding medals to Mr. and Mrs. Sarkis Sepetjian, Mr. and Mrs. Osko Karaghossian, singer Harout Pamboukjian, editor Mr. Nazaret Berberian, sponsor Mr. Harout Ohanessian, and Mr. Guiragos Titizian (posthumously).